Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության
Երևանի գրասենյակ

Ուսանողական ժողովրդավարությունը Հայաստանում 2008

Գնահատման զեկույց

հունիսի 8-14, 2008

Երևան

Ներածություն

2008թ.-ի հունիսին Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) Երևանի գրասենյակը հրավիրել էր Եվրոպական ուսանողական միությանը (ԵՈՒՄ) Հայաստան՝ հայ ուսանողական շարժումն ուսումնասիրելու նպատակով: Այցի նպատակն էր հայաստանյան բարձրագույն կրթական համակարգի ընդհանուր համատեքստում գնահատել բուհերի ուսանողական խորհուրդների ուժեղ և թույլ կողմերը: Հայաստան այցելած թիմի անդամները հարցազրույցներ են վարել բարձրագույն կրթության համակարգի հիմնական դերակատարների (ռեկտորներ, փոխնախարարներ, արհմիություններ), ինչպես նաև ուսանողական շարժման մի շարք մարմինների հետ (ուսանողական խորհուրդներ, ուսանողական ՀԿ-ներ և Հայաստանի երիտասարդության ազգային խորհուրդը): Թիմի կարծիքով, հարցազրույցների միջոցով այն կարողացել է համեմատաբար հստակ պատկերացում կազմել հայ ուսանողական շարժման մասին, թեև ցանկացած այդպիսի շարժում բավական բարդ ու բազմազան երևույթ է, որը դժվար է ամփոփ նկարագրել մի քանի էջի սահմաններում: Սույն զեկույցի մեջ ներկայացված տեսակետները հիմնված են հարցազրույցների, ինչպես նաև թիմի անդամների միջև տեղի ունեցած բազմաթիվ քննարկումների վրա: Զեկույցում նախ ներկայացված են մի քանի ընդհանուր նկատառումներ, ապա նկարագրվում է հայ ուսանողական շարժումը, որը դիտարկվում է ԵՈՒՄ-ի՝ ուսանողների ներկայացվածության չորս հիմնական հենասյուների տեսանկյունից: Վերջում ներկայացված են մի քանի առաջարկություններ, որոնք ուղղված են ուսանողների ներկայացվածության խնդիրներով զբաղվող հիմնական մարմիններին և, մասնավորապես, ուսանողական խորհուրդներին:

Ընդհանուր նկատառումներ

Թիմի կարծիքով, թեև հայ ուսանողական շարժումը (դեռ) չի իրականացնում ուսանողների ներկայացվածության չորս հիմնական սկզբունքները, նրա ապագան բացասական չէ: Մի շարք հանդիպումների ընթացքում խանդավառ անհատներ թիմի անդամներին հավաստիացրել են, որ յուրաքանչյուր բուհում կան ուսանողների խմբեր, որոնք պատրաստ են ակտիվ գործունեություն սկսել: Սույն զեկույցի նպատակն է Հայաստանի բարձրագույն կրթության ոլորտի

մասնակիցների ուշադրությունը հրավիրել այն փաստին, թե ինչպես են ներկայացված ուսանողները: Թիմը լավատեսորեն է տրամադրված, որ եթե ուսանողների ներկայացվածության խնդրի հանրային քննարկում ծավալվի, ապա կզարգանա հզոր ուսանողական շարժում՝ զգալիորեն բարելավելով բարձրագույն կրթության բարեփոխումների որակը:

Հայաստանի բուհերի ուսանողների առջև ծառացած ամենահետաքրքիր մարտահրավերն այն է, ինչ թիմն անվանել է «երկու համակարգերի համակարգ»: Գոյություն ունի իրավական համակարգ, որն ապահովում է ուսանողների ներկայացվածությունը բոլոր բուհերում: Այդ համակարգում գոյություն ունեն ուսանողական խորհուրդներ, որոնք համեմատաբար հզոր դեր են խաղում պետական բուհերի կառավարման բոլոր մարմիններում: Ուսանողական խորհուրդների միջոցով ուսանողները կարող են արտահայտել իրենց մտահոգությունները և փոխել իրողությունը: Այս պաշտոնական կառույցին զուգահեռ գոյություն ունի որոշումներ կայացնելու ոչ պաշտոնական կարգ, որի համաձայն որոշումները կայացվում են ոչ այնքան պաշտոնական եղանակով: Որոշումներ կայացնելու այս ոչ պաշտոնական համակարգում կարևոր են մարդկանց միջև անձնական հարաբերությունները, ոչ պաշտոնական կապերը և տեղեկատվության մատչելիությունը: Այս երկու համակարգերը գործում են զուգահեռաբար և երբեմն խաչվում են՝ դժվարացնելով ուսանողների՝ իրենց իրավիճակի վրա ազդելու և այն բարելավելու հստակ ճանապարհներ գտնելու գործընթացը:

Այն փաստը, որ Հայաստանը նոր է սկսում իրականացնել Բոլոնիայի բարեփոխումները, պետք է խրախուսի ուսանողներին, որպեսզի նրանք պահանջեն հենց հիմա ապահովել իրենց մասնակցությունը բարձրագույն կրթությանը վերաբերող բոլոր քննարկումներին:

Թիմը ցանկանում է շնորհակալություն հայտնել բոլորին, ովքեր մասնակցել են հարցազրույցներին, և ԵԱՀԿ-ի Երևանի գրասենյակին՝ ԵՈՒՄ-ին նմանատիպ գնահատում կատարելու նպատակով Հայաստան հրավիրելու համար: Մենք հուսով ենք, որ մեր ներդրումն օգտակար կլինի Հայաստանում ուսանողների մասնակցության համար:

Ուսանողների ներկայացվածություն

2008թ.-ի մարտի 13-ից մինչև 17-ը ԵՈՒՄ-ը կազմակերպել էր Եվրոպական ուսանողական համաժողով, որը տեղի ունեցավ Սլովենիայի՝ Եվրամիության նախագահության շրջանակներում: Համաժողովի ընթացքում քննարկվել է ուսանողական ժողովրդավարության զարգացման խնդիրը, և մասնակիցներն ընդունել են այսպես կոչված «Լյուբլյանայի հռչակագիրը», որը սահմանում է ուսանողական շարժման հիմնական հենասյուները: Հռչակագրի համաձայն, չնայած Եվրոպայում ուսանողական միությունների բազմազանությանը (սկսած «ժողովրդավարությանն ուղղված գաղտնի շարժումներից, որոնք ծառայում են որպես հեղափոխության և փողոցային բողոքի ակցիաների խթան, մինչև կառավարություններին, բուհերին և բարձրագույն կրթության համակարգի այլ շահագրգիռ կողմերին խորհուրդներ տվող ազդեցիկ մասնակիցներ լինելը), շատ են նաև միավորող գործոնները, որոնք կազմում են ուսանողների ներկայացվածության սկզբունքները: Թիմը վստահ է, որ հայ ուսանողական շարժումը պետք է դիտարկվի այդ չորս սկզբունքների շրջանակներում:

Բաց լինելը

Բաց և հասանելի լինել բոլոր ուսանողների համար՝ անկախ նրանց սոցիալ-տնտեսական պայմաններից, ռասայից, սեռական կամ քաղաքական նախապատվություններից, սեռից և դավանանքից

Թիմը չի հայտնաբերել էական հիմքեր ուսանողական ներկայացվածության կառույցներից որևէ խումբ դուրս թողնելու համար: Այն հանդիպել է տարբեր սեռի և տարբեր քաղաքական հայացքներ ունեցող ուսանողների ներկայացուցիչների: Բարձրագույն կրթության մասին օրենքը նույնպես երաշխավորում է, որ ուսանող լինելու կարգավիճակը միակ կարգավիճակն է, որը հաշվի է առնվում ուսանողների ներկայացուցիչ լինելու համար, և որ կուսակցական քաղաքականությունը արգելված է բուհերում:

Սակայն գործնականում այցելու թիմը մի շարք խտրական կողմեր է նկատել հայ ուսանողական խորհուրդներում: Դրանցից ամենաակնհայտն այն է, որ ուսանողական խորհուրդների

ղեկավարությունների մեծ մասը կապված է Հայաստանի իշխող կուսակցության հետ կամ այդ կուսակցության անդամ է հանդիսանում: Մի քանի անգամ նշվել է, որ ուսանողական ներկայացվածության կառույցներում առաջխաղացումն ավելի դժվար է, եթե տվյալ կուսակցության հետ առնչություն չունես, կամ եթե առնչություն ունես «սխալ» կուսակցության հետ: Ավելին, քանի որ տեղեկատվության հոսքը կատարվում է ոչ պաշտոնական ուղիներով, ոչ բոլորն են հավասարապես տեղյակ, թե ինչ է կատարվում որոշում կայացնող մարմիններում: Բուհերի խորհուրդների նախագահները հիմնականում տղամարդիկ են, բայց մի քանի ֆակուլտետների ուսանողական խորհուրդների նախագահներ իգական սեռի ուսանողներ են: Հարցազրույցներից մեկի ժամանակ նշվել է նաև, որ ավելի աղքատ ընտանիքների ուսանողների համար ավելի դժվար է մուտք գործել ուսանողական ներկայացվածության կառույցներ, որովհետև հնարավոր է, որ իրենց ուսման վարձը բարձր է և նրանք ստիպված են աշխատել, որպեսզի վճարեն ուսման համար: Եվ վերջինը. հաճախ նշվել է, որ ուսանողների ընտրված ներկայացուցիչները գերազանցիկներ են կամ պետք է գերազանցիկ լինեն:

Թիմը կարծում է, որ ցանկացած ուսանող՝ գերազանցիկ թե ոչ, հնարավորություն պետք է ունենա ներկայացնել մյուս ուսանողներին: Ուսանողների առաջնորդների հատկությունները կախված են ոչ թե նրանց առաջադիմությունից կամ սոցիալ-տնտեսական վիճակից, այլ ուսանողների կարծիքները բարձրաձայնելու կարողությունից և առաջնորդի այլ հատկություններից:

Ժողովրդավարություն

Որոշումներ կայացնելու գործընթաց՝ կազմակերպված ժողովրդավարական եղանակով և վերահսկվող ուսանողների կողմից

Խորհուրդների կառուցվածքը հիմնված է ներկայացվածության «բուրգ» մոդելի վրա: Ֆակուլտետների խորհուրդներն ընտրվում են ընդհանուր քվեարկությամբ, որին մասնակցում են բոլոր ուսանողները՝ յուրաքանչյուրն ունենալով մեկ ձայնի իրավունք: Ապա բոլոր ֆակուլտետների խորհուրդները միասին ընտրում են բուհի ուսանողական խորհուրդը: Այսպիսի կառուցվածքն ինքնին կարող է ապահովել ուսանողների շահերի լայն ներկայացվածություն: Սակայն այն ուսանողներին չի երաշխավորում խորհուրդների աշխատանքը հաշվետու պահելու

հնարավորություններ: Ուսանողներն ազդելու հնարավորություն ունեն միայն ընտրությունների միջոցով ընդամենը տարին մեկ անգամ, իսկ որոշ դեպքերում՝ նույնիսկ երկու տարին մեկ: Ավելին, ընտրությունների գործընթացի և ընտրությունների արդյունքների մասին տեղեկությունների պակաս կա (վիճակագրական տվյալներ, մասնակցության ցուցանիշներ և այլն), ինչի հետևանքով դժվար է գնահատել, թե որքանով են ընտրությունները համապատասխանել ժողովրդավարության չափանիշներին: Թիմի թերահավատ վերաբերմունքը բուհական ընտրությունների նկատմամբ հաստատվում է այն փաստով, որ ուսանողական խորհուրդների ընտրություններում մասնակցության ցուցանիշը շատ ցածր է: Այդ իսկ պատճառով թիմը կարծում է, որ հայ ուսանողական շարժման վիճակը բարելավելու համար անհրաժեշտ կարևոր քայլերից մեկը պետք է լինի հենց բուհական ընտրությունների մասին վիճակագրական տվյալներ հավաքելը:

Այսպիսի կառուցվածքով գործող խորհուրդները մեծ ջանքեր պետք է թափեն՝ ուսանողների համար ավելի հասանելի դառնալու և բուհի վիճակի ու դրա բարելավմանն ուղղված ռազմավարության քննարկումների մեջ ուսանողներին ներգրավելու համար: Թիմը շատ քիչ քայլեր է տեսել այդ ուղղությամբ, բացի շատ հազվադեպ դեպքերից:

Մտահոգիչ է այն փաստը, որ շատ քիչ ուսանողներ են մասնակցում ուսանողական խորհուրդների որոշումներ կայացնելու գործընթացներին: Հարցազրույցների ժամանակ որոշումներ կայացնելը հաճախ ներկայացվել է որպես խորհուրդի անդամների հետ հանդիպման և համաձայնեցման արդյունք: Իրենց դիրքորոշումների և ղեկավարության հետ հանդիպումների ժամանակ հնչեցված հայտարարությունների համար խորհուրդները համարյա հաշվետու չեն ուսանողների առջև: Ուսանողներն իրենց ներկայացուցիչներից հաշվետվություն պահանջելու ոչ մի լծակ չունեն, ինչը հիմնականում պայմանավորված է նրանով, որ տեղեկատվությունը խորհուրդներից դեպի սովորական ուսանողներ չի փոխանցվում: Ավելին, չկան ինստիտուցիոնալացված կանոնավոր հանրային հանդիպումներ, որտեղ ուսանողները կկարողանային հարցեր ուղղել իրենց ներկայացուցիչներին: Սա բերում է ներկայացուցիչների և ընտրողների միջև կապի խզման, հատկապես, եթե ընտրությունները ոչ ամեն տարի են տեղի ունենում:

Քանի որ բուհերի ղեկավարությունը սովորաբար լավ տեղեկացված է, ունի ռեսուրսներ և քաղաքական ազդեցություն, այն կարող է մեծ ազդեցություն ունենալ ուսանողների ներկայացուցիչների հետ քննարկումների ընթացքի վրա: Միայն մի քանի դեպքում են ուսանողական խորհուրդները կարողացել առարկել և փոխել բուհի ղեկավարության որոշումները: Սակայն ուսանողների բազմաթիվ խնդիրները ցույց են տալիս, որ իրականությունը չպետք է այսպիսին լինի: Ավելին, թիմն այնպիսի տպավորություն է ստացել, որ որոշ դեպքերում ուսանողական մարմինների ղեկավարները այլևս ուսանողներ չեն, կամ արդեն բազմաթիվ տարիներ հանդես են գալիս որպես ուսանողների ներկայացուցիչներ, ինչը վկայում է այդ պաշտոնների համար ժողովրդավարական ընտրությունների պակասի մասին:

Վերոհիշյալ իրավիճակը հատուկ է միայն պետական բուհերին: Մասնավոր բուհերում, որտեղ ազգային օրենսդրությունը չի գործում, իրավիճակը շատ ավելի վատ է: Մասնավոր բուհերից շատ քչերն են փորձում ուսանողներին ներգրավել որոշումներ կայացնելու գործընթացների մեջ: Սակայն մասնավոր բուհերում տիրող իրավիճակն այնքան բազմազան է, որ ընդհանուր եզրակացություններ անելը շատ դժվար է:

Ներկայացուցչություն

Բոլոր ուսանողների և նրանց բոլոր շահերի ներկայացվածություն

Հայաստանի բոլոր պետական բուհերն ուսանողական խորհուրդներ ունեն: Ավելին, կան նաև ուսանողական ՀԿ-ներ, որոնք սերտորեն համագործակցում են ուսանողական խորհուրդների հետ:

Այնուամենայնիվ, թիմը կարծում է, որ հայ ուսանողական ներկայացվածության կառույցների ամենամեծ մարտահրավերները կապված են հենց այդ ոլորտի հետ: Ուսանողական խորհուրդները հաճախ բնութագրվում են որպես ուսանողության «էլիտա» (առաջադիմության և սոցիալ-տնտեսական առումներով), որոնք այդքան էլ սերտ կապեր չունեն իրենց ընտրողների հետ: Ուսանողական խորհուրդներին դիմելու ընթացակարգերը քիչ են, խորհուրդներն իրենց ծրագրերով բուհեր մտնելու շատ քայլեր չեն ձեռնարկում, իսկ ընտրությունները հազվադեպ են

հիմնված կոնկրետ խնդիրների վրա, որոնք կապված են տվյալ բուհի ուսանողության շահերի հետ:

Սա առավել մտահոգիչ է, որովհետև ուսանողական խորհուրդներում կարծես թե գերիշխում են որոշակի քաղաքական հայացքներ, մինչդեռ դրանք շատ ավելի բազմազան են ուսանողության շրջանում: Սա բերում է ուսանողական խորհուրդների օբյեկտիվության և ներկայացուցչական լինելու վերաբերյալ վստահության պակասի՝ մի խնդիր, որն ավելի քան մեկ անգամ է արծարծվել հարցազրույցների ժամանակ: Ուսանողների շահերի էության և դրանք լավագույնս ներկայացնելու միջոցների մասին որոշումը կարող է կայացվել միայն այն դեպքում, երբ բարձրացվում և քննարկվում են ուսանողների բոլոր տեսակետները: Ուսանողների ներկայացուցիչները տեսանելի են դարձել հիմնականում կուսակցական քաղաքական ակտիվիզմի, և ոչ թե ուսանողական ակտիվիզմի շնորհիվ:

Կարևոր է նշել, որ թիմն ուսանողական ներկայացվածության այլ կառույցներ էլ է հայտնաբերել: Թիմը տեսել է մի շարք ՀԿ-ներ, որոնք ավելի մոտ են կանգնած ուսանողներին, քննարկումներ են անցկացնում նրանց հետ և ներկայացնում նրանց շահերը: Դա վկայում է այն մասին, որ ուսանողներին ներկայացնելու հարցում ոչ մի կազմակերպություն մենաշնորհային դիրք չունի: Միևնույն ժամանակ թիմը չի հայտնաբերել ազգային մակարդակով Հայաստանի բոլոր ուսանողներին ներկայացնող ոչ մի կազմակերպություն:

Քանի որ մասնավոր բուհերի վրա տարածվող համապատասխան օրենսդրություն չկա, այդ բուհերում ուսանողների ներգրավվածության աստիճանը համեմատաբար ցածր է:

Անկախություն

Որոշումներ կայացնելու գործընթացի անկախություն բուհերից, կառավարությունից և կուսակցական քաղաքականությունից

Սկզբունքորեն, ուսանողներն ունեն սեփական որոշումներ կայացնելու իրավունք: Նորմալ է համարվում այն, որ այդ որոշումները կայացվում են քաղաքական և հասարակական

համատեքստում, որտեղ ամեն ինչ չէ, որ հնարավոր է: Թիմը տեղեկացել է մի քանի դեպքի մասին, երբ ուսանողական խորհուրդներն առաջ են քաշել սեփական գաղափարներ և, որոշ դեպքերում, կարողացել են դրանք իրականություն դարձնել: Թիմը հայտնաբերել է դրական օրինակներ, ինչպիսիք են՝ կոռուպցիայի դեմ պայքարը և Գյումրիի մի քանի բուհերում օմբուդսմենի պաշտոնի ստեղծումը: Որպես հաջողված օրինակ է նշվել նաև բողոքի ակցիան պարտադիր զինվորական ծառայության մասին օրենքի դեմ, որի համաձայն ուսանողները պետք է գնային բանակ ծառայելու:

Թիմը որոշ կասկածներ ունի բուհերի և այլ դերակատարների՝ ուսանողներին անկախ որոշումներ կայացնելու հնարավորություն տալու պատրաստակամության վերաբերյալ: Բազմիցս նշվել է, որ բուհերի ղեկավարություններն ուշադիր հետևում են ուսանողության շրջանում տեղի ունեցող բոլոր շարժումներին կամ իրարանցումներին: Բացի այդ, քաղաքական կուսակցությունների կողմից տաղանդավոր երիտասարդներին հավաքագրելը և միջոցառումներ ֆինանսավորելը սովորական երևույթներ են, քանի որ բուհերում կան ձայներ, որոնք կարելի է ստանալ ընտրությունների ժամանակ: Թիմը գտել է, որ քիչ են (կամ ընդհանրապես չկան) այն ռեսուրսները, որոնց նկատմամբ ուսանողներն ունեն որոշումներ կայացնելու լիազորություն: Իրենց միջոցառումները ֆինանսավորելու, աշխատելու և հանդիպումներ անցկացնելու համար տարածք ունենալու հարցում նրանք ապավինում են բուհերի ղեկավարության և այլ դերակատարների բարի կամքին: Ռեսուրսները, որոնցից ուսանողական խորհուրդներին թույլ են տալիս օգտվել, հեշտությամբ կարող են դառնալ շանտաժի զենք, եթե կան հակառակ դիրքորոշումներ, կամ էլ ամենօրյա գործունեության համար օգտագործվող ուղղիչ միջոց: Արատավոր համակարգը հիմնված է այն փաստի վրա, որ ուսանողների առաջնորդը կարող է «դաստիարակվել» այդպիսի ռեսուրսներով՝ մի կողմից, ընդունելի դառնալով ներկայացված ուսանողների համար, և մյուս կողմից, երբեք ղեկավարության դեմ կարծիքներ չհայտնելով և, ավելին, օգտագործվելով որպես ղեկավարության կեղտոտ գործերը լուծելու միջոց: Թիմի այս ենթադրությունը հիմնված է ուսանողների ներկայացուցիչների պահանջով և ճնշման տակ դասախոսների նկատմամբ կիրառված պատիժների դեպքերի վրա, պատիժներ, որ հաճախ կիրառվել են առանց ապացուցված փաստերի և տվյալների:

Թիմը նաև հայտնաբերել է շիզոֆրենիկ կապ բուհերի և կուսակցական քաղաքականության միջև: Բուհերի վարչական ղեկավարները և ուսանողական խորհուրդների անդամները

սովորաբար կուսակցականներ են, մինչդեռ քաղաքականությունը բուհերում (օրինակ՝ բաց քարոզչությունը կամ քաղաքականության բաց քննարկումները) օրենքով արգելված է: Թիմը կարծում է, որ դա ուսանողների և դասախոսների ակադեմիական ազատության վերաբերյալ լուրջ մտահոգությունների տեղիք է տալիս: Բուհերը պետք է բաց բանավեճերի տեղ լինեն, որտեղ կարտահայտվեն տարբեր քաղաքական հայացքներ, իսկ քաղաքական իրադարձություններն ու որոշումներն ազատ կքննարկվեն: Հայաստանի քաղաքական նման փոքորկոտ համակարգում այդպիսի բաց ֆորումներն ավելի խիստ են անհրաժեշտ, քան այլ երկրներում:

Առաջարկություններ

Քննարկելով այցի ընթացքում հավաքված նյութերը, թիմը մի շարք առաջարկություններ է մշակել: Առաջարկությունները բաժանված են չորս խմբերի՝ ուղղված ուսանողական խորհուրդներին, բուհերին, Կրթության և գիտության նախարարությանը և ԵԱՀԿ Երևանի գրասենյակին: Թիմը կարծում է, որ ուսանողների կազմակերպումը նախ և առաջ հենց ուսանողների պարտականությունն է, սակայն բարձրագույն կրթական համակարգը կարող է այնպիսի պայմաններ ստեղծել, որոնք կնպաստեն ուսանողական ներկայացվածության ավելի ամուր կառույցի զարգացմանը:

Ուսանողական խորհուրդներին

1. Բարելավել տեղեկատվության հոսքը ուսանողներից և դեպի ուսանողները

   Ուսանողական խորհուրդները պետք է ավելի շատ ջանքեր թափեն ուսանողների հետ հարաբերությունները բարելավելու համար, ինչը կբարձրացնի վստահությունն իրենց հեղինակության և աշխատանքի նկատմամբ: Խորհուրդները կարող են մշակել գովազդային նյութեր, օնլայն հաղորդակցության միջոցներ (թեև ինտերնետի մատչելիությունը դեռևս լուրջ խնդիր է շատ ուսանողների համար), կազմակերպել հանրային բանավեճեր և կատարել հասարակական կարծիքի ուսումնասիրություններ և հարցումներ՝ ուսանողության հետ կապերը սերտացնելու նպատակով: Թիմն ուսանողական խորհուրդներին նաև առաջարկում է հատկացնել հատուկ ժամեր, որոնց ընթացքում ուսանողները կկարողանան դիմել իրենց՝

խորհրդատվություն ստանալու և բողոքներ ներկայացնելու համար: Իրենց տեսանելիությունը բարձրացնելու նպատակով խորհուրդները կարող են բուհական աղբյուրներով տեղեկատվություն տրամադրել առաջին կուրսեցիներին և «բարի գալուստ»-ի սեղաններ տեղադրել բուհերում՝ վերջիններիս ողջունելու համար:

2. Ապահովել բազմակարծություն բանավեճերի ժամանակ

Իրենց տեսակետներն ամրապնդելու և որոշումների լեգիտիմության աստիճանը բարձրացնելու համար ուսանողական խորհուրդները պետք է փորձեն ավելի շատ քննադատական ձայներ գտնել իրենց ընտրողների շրջանում: Հանրային քննարկումների և ներքին հանդիպումների ժամանակ խորհուրդները պետք է փնտրեն այն մարդկանց, որոնք համաձայն չեն իրենց տեսակետների հետ: Խորհուրդները պետք է զարգացնեն ավելի առողջ և անկողմնակալ հարաբերություններ քաղաքականության տեսակետից և ապահովեն բոլոր քաղաքական կարծիքների, և ոչ թե որևէ մեկ կուսակցության հայացքների հնչողությունը:

3. Ստեղծել անկախ կառույցներ, հստակ մանդատներ և աշխատանքային ծրագիր

Ուսանողական խորհուրդները կարող են ավելի անկախ դառնալ իրենց կարծիքները ձևավորելու հարցում: Նրանք պետք է ձգտեն իրավական կարգավիճակ ստանալ: Ուսանողական խորհուրդները պետք է փորձեն գտնել ռեսուրսներ, որոնք կկարողանան ինքնուրույն տնօրինել (գրասենյակ, բանկային հաշիվ, նյութատեխնիկական ռեսուրսներ և այլն): Նրանք պետք է մտածեն ՀԿ-ներ հիմնելու մասին, որոնց միջոցով կկարողանան օգտվել ծրագրային ֆինանսավորումից և գործել որպես իրավաբանական անձինք: Ուսանողական խորհուրդները պետք է փորձեն ավելի ռացիոնալ ձևակերպել իրենց ծրագրերն ուսանողների համար: Ընտրություններից հետո (կամ, ցանկալի է, ընտրություններից առաջ) նրանք պետք է հրապարակեն իրենց աշխատանքային ծրագիրը, որի մեջ պետք է նշված լինեն խորհուրդի գաղափարները և նախատեսվող գործողությունները: Ծրագիրը պետք է քննարկվի և համաձայնեցվի բուհի ողջ ուսանողության հետ: Ավելին, ուսանողական խորհուրդները պետք է սկսեն պայքարել բուհերի ղեկավարության և քաղաքական կուսակցությունների կողմից միջամտությունների դեմ:

Բուհերին

1. Ապահովել ուսանողների ինքնուրույնությունը ռեսուրսների նկատմամբ

Ուսանողությունը պետք է վերահսկի բյուջեի հատկացումները, որոնք նախատեսված են ուսանողական գործերի համար և կարող են օգտագործվել ուսանողների ներկայացվածության համար: Ուսանողները պետք է ունենան պատշաճ սարքավորումներով հագեցած գրասենյակներ և հանդիպումների սրահներ, որտեղ նրանք կկարողանան ազատ հանդիպել՝ առանց բուհի ղեկավարության ներկայության կամ թույլտվության (այսինքն՝ այդ սենյակների բանալիները պետք է ուսանողների մոտ լինեն):

2. Բարելավել ընտրությունների և ուսանողական խորհուրդների վերաբերյալ տեղեկատվության հոսքը

Բուհերի ղեկավարությունը մենաշնորհային իրավունքով պահպանում է կրթական բարեփոխումների և բուհի խնդիրների մասին տեղեկատվությունը: Ղեկավարությունը պետք է տպագրի ուսանողներին ուղղված տեղեկատվական թերթիկներ և թերթ/ամսագրեր, ինչպես նաև տեղադրի բուհի բարեփոխումների հասկանալի և մատչելի պլանները իր վեբ կայքում: Խորհրդի ընտրությունների ժամանակ ղեկավարությունը պետք է ազատ արծարծի բոլոր խնդիրները և տեղեկատվական ռեսուրսներ տրամադրի բոլոր նրանց, ովքեր մասնակցում են ընտրություններին որպես թեկնածուներ:

3. Բարձրացնել սեփական արդյունավետության մակարդակը

Բուհերը պետք է ձգտեն առավել անկախության պետությունից: Թեև բուհերի խորհուրդների կազմում Կրթության և գիտության նախարարության և կառավարության ներկայացուցիչների ներկայությունը կարող է առավելություններ տալ, այն կարող է նաև վտանգել բուհի անկախությունը և սահմանափակել բուհի գործողությունները: Բուհերը պետք է քննարկեն կրթական քաղաքականությունը ուսանողների և դասախոսական կազմի հետ նույնպես, որպեսզի փոփոխություններն ավելի ընդունելի լինեն և գիտելիքների ու տեղեկատվության երկկողմանի փոխանցում տեղի ունենա: Ուսանողները պետք է նաև ընդգրկված լինեն բուհի որակի հսկողության կառույցների մեջ, որովհետև ուսանողությունը ներգրավված միակ մարմինն է, որի նպատակները համընկնում են որակի ապահովման ընդհանուր նպատակների հետ: Այս գործընթացում ուսանողների միակ նպատակն է ստանալ

հնարավորինս լավ կրթություն: Ի վերջո, նրանք միակ մարդիկ են, ովքեր կարող են ներկայացնել կրթական համակարգում կրթվողի տեսակետը՝ լրացնելով դասավանդողների տեսակետները:

Կրթության և գիտության նախարարությանը

1. Բարելավել բարեփոխումների մասին տեղեկատվությունը

Կրթության և գիտության նախարարությունը պետք է հրապարակի ուսանողներին ուղղված տեղեկատվական թերթիկներ և անցկացնի տեղեկատվական հանդիպումներ Բոլոնիայի գործընթացի բարեփոխումների մասին: Այդ աշխատանքը կազմակերպելու համար նախարարությունը կարող է օգտագործել Բոլոնիայի փորձագետների իր ցանցը:

2. Վերանայել օրենսդրությունը՝ ուսանողական մարմիններն ավելի անկախ դարձնելու նպատակով

Նախարարությունը պետք է անի այնպես, որ օրենքով հնարավոր և հեշտ լինի ուսանողների կողմից ՀԿ-ների ստեղծումը, որոնք կունենան սեփական բանկային հաշիվներ և անկախ ռեսուրսներ (ֆինանսական միջոցներ, հանդիպումներ անցկացնելու համար տարածք և այլն): Ուսանողական խորհուրդները նույնպես պետք է այդ հնարավորությունն ունենան, որպեսզի կարողանան բուհերի ղեկավարությունից ավելի անկախ դառնալ:

3. Ուշադրություն դարձնել մասնավոր բուհերի կարգավիճակի վրա

Քանի որ կառավարությունը, կարծես, պատրաստվում է վերանայել մասնավոր բուհերին վերաբերող օրենսդրությունը, նոր մշակվելիք ընթացակարգերում անհրաժեշտ է հաշվի առնել ուսանողների ներկայացվածության կառույցները: Մասնավորապես, որակի ապահովման մեխանիզմներում ուսանողների մասնակցությունը պետք է պարտադիր լինի:

4. Ներգրավել ուսանողներին ազգային բանավեճերի և կառույցների մեջ

Կրթության և գիտության նախարարությունը պետք է ուսանողներին ընդգրկի կրթության որակի ապահովման ազգային մարմնում: Ինչպես արդեն նշվել է, ուսանողությունը միակ խումբն է, որի նպատակները չեն տարբերվում որակի ապահովման ընդհանուր

նպատակներից: Նրանք կարող են կարևոր տեսանկյուն ավելացնել որակի ապահովման գործընթացի մեջ և ավելի սերտ կապեր հաստատել համապատասխան բուհերի ուսանողների հետ՝ դասավանդման գործընթացի վերաբերյալ նրանցից իրական տեսակետներ ստանալու նպատակով:

Ավելին, մինչ իրավական միջոցներ ընդունելը, նախարարությունը պետք է ուսանողներին և դասախոսական կազմին ներգրավի բարձրագույն կրթության հարցերի շուրջ ծավալվող բանավեճերի մեջ: Այս դեպքում նախարարությունը կարող է ավելի լավ օրենքներ նախագծել, որոնք կընդունվեն լայն շրջանակների կողմից և ավելի կբարելավեն բարձրագույն կրթության ոլորտը:

ԵԱՀԿ Երևանի գրասենյակին

1. Իրականացնել հակակոռուպցիոն արշավ

ԵՈՒՄ-ն ԵԱՀԿ Երևանի գրասենյակին խորհուրդ է տալիս իրականացնել հակակոռուպցիոն կամ «հանուն մաքուր բուհի» արշավ՝ հետևելով Ռումինիայի կամ Սերբիայի օրինակներին: Արշավը պետք է ընդգրկի բոլոր շահագրգիռ կողմերին՝ ուսանողներին, բուհերի ղեկավարություններին և համապատասխան նախարարություններին: Արշավը պետք է իրականացվի ընտրված խորհրդի կողմից: Խորհրդում ընդգրկվելու ցանկություն ունեցողները պետք է դիմում ներկայացնեն: Ուսանողների խորհուրդներում մասնակցությունը ցանկալի է, սակայն ոչ պարտադիր:

2. Իրականացնել բուհական ընտրությունների մոնիտորինգ

ԵԱՀԿ-ն ընտրությունների մոնիտորինգի լավ համբավ ունի, ուստի լավ կլիներ իրականացնել նաև բուհական ընտրությունների մոնիտորինգ: ԵԱՀԿ-ն պետք է հավաքի և հրապարակի բուհական ընտրություններին վերաբերող օրենքները և թեկնածուներին ֆինանսական օգնություն տրամադրի՝ նախընտրական նյութեր պատրաստելու համար: Որպես վերջին քայլ, ԵԱՀԿ-ն պետք է իրականացնի ընտրությունների մոնիտորինգ և հրապարակի արդյունքները:

3. Տպագրել նվաճումների ուղեցույց

Հայաստանի ուսանողներին պետք է ներկայացնել ուսանողական շարժման լավագույն փորձի օրինակներ ինչպես երկրի ներսից, այնպես էլ արտասահմանից: Սա կարող է սկիզբ դնել Հայաստանում բարձրագույն կրթության վերաբերյալ ընդհանուր ազատ քննարկմանը: Ուղեցույցը պետք է պարունակի լավագույն պրակտիկայի օրինակներ եվրոպական երկրներից՝ որպես նշաձող, և Հայաստանից՝ որպես ապացույց, որ փոփոխությունը միանգամայն հնարավոր է: Ուղեցույցը պետք է լինի տպագիր, ինչպես նաև մատչելի էլեկտրոնային օնլայն տարբերակով: Անհրաժեշտ է նաև մի շարք միջոցառումներ կազմակերպել՝ ողջ Հայաստանի տարածքում ուսանողներին ուղեցույցը ներկայացնելու և նրանց հետ քննարկելու նպատակով:

Երախտիքի խոսք

Թիմը՝ Կուն Գեվենը, Վիորել Պրոտեասան և Յենս Յունգբլուտը, ցանկանում է շնորհակալություն հայտնել հարցազրույցներին մասնակցած բոլոր անձանց՝ ժամանակ հատկացնելու և Հայաստանի բարձրագույն կրթական ոլորտի և, հատկապես, ուսանողների դերի մասին իրենց կարծիքները և պատկերացումները թիմի հետ կիսելու համար: Թիմը նաև շնորհակալություն է հայտնում թարգմանչուհուն՝ տկն. Քրիստինե Կարապետյանին, ով մեծապես օգնել է հասկանալ հայ ուսանողների առջև ծառացած խնդիրները:

Թիմն իր խորին երախտիքն է հայտնում ԵԱՀԿ Երևանի գրասենյակին և հատկապես Ժողովրդավարացման բաժնին՝ ի դեմս Սվեն Հոլդարի և Մելինե Նահապետյանի՝ իրենց աջակցության և հիանալի հյուրընկալության համար: ԵՈւՄ-ի պատվիրակությունը լի է հետագա համագործակցության ակնկալիքներով:

Եվրոպական ուսանողական միություն (ԵՈՒՄ)

Եվրոպական ուսանողական միությունը միավորում է 38 երկրների 49 ազգային ուսանողական միություններ, որոնց անդամների միջոցով ներկայացնում է ավելի քան 10 միլիոն ուսանողների: ԵՈՒՄ-ի նպատակն է եվրոպական մակարդակով ներկայացնել և առաջ քաշել ուսանողների կրթական, սոցիալական, տնտեսական և մշակութային շահերը և դրանք հասցնել բոլոր համապատասխան մարմիններին, մասնավորապես՝ Եվրամիությանը, Եվրոպայի խորհրդին և ՅՈՒՆԵՍԿՈ-ին:

Ղյու դե լա Սաբլոնիեղ 20
1000 Բրյուսել
Բելգիա
Հեռ.՝ +32-2-502 23 62
Ֆաքս՝ +32-2-706 48 26
Էլ. փոստ՝ secretariat@esu-online.org
Վեբ կայք՝ www.esu-online.org